«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ ____-ի N_____Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 712-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. ՀայաստանիՀանրապետությանկառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետում «և «Թ» բաժիններում» բառերը փոխարինել ««,Թ» բաժիններում և «Թ.1» բաժնի 16.2-րդ և 16.3-րդ կետերում» բառերով,

2) որոշման 3.1-ին կետում «հերթապահ ծառայությունների,» բառերից հետո լրացնել «Օպերատիվ կառավարման կենտրոնի,» բառերը,

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-րդ կետով.

«3.2. Սույն որոշման N 8 հավելվածով սահմանված հավելումների առավելագույն չափերի շրջանակներում յուրաքանչյուր մակարդակին (ըստ ծառայության ստաժի) համապատասխանող հավելումների կոնկրետ չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը։»

4) որոշման N 8 հավելվածի «Գ» բաժնի 5-րդ կետի 4-րդ ենթակետում և «Ե» բաժնի 9-րդ կետի 3-րդ ենթակետում «ավագ ինժեներ, ինժեներ» բառերը փոխարինել «ավագ ճարտարագետ, ճարտարագետ» բառերով,

5) որոշման N 8 հավելվածի «Ե» բաժնի 11-րդ կետում «ծառայողներ» բառից հետո լրացնել «, Երևան քաղաքի վարչության ենթակա տարածքային բաժնի ծառայության վաշտի ծառայողներ, տարածքային բաժնի բաժանմունքի ծառայության ավագ տեսուչ» բառերը:

6) որոշման N 8 հավելվածի «Ը» բաժնի 15-րդ կետի՝

ա. 10-րդ ենթակետում «Գնդի հրամանատարի տեղակալ» բառերից հետո լրացնել «, պարեկային գումարտակի հրամանատար» բառերը,

բ. 11-րդ ենթակետում «Գնդի գումարտակի հրամանատար» բառերից հետո լրացնել «, պարեկային գումարտակի հրամանատարի տեղակալ» բառերը,

գ. 13-րդ ենթակետում «Վաշտի հրամանատարի տեղակալ» բառերից հետո լրացնել «, պարեկային դասակի հրամանատար» բառերը,

7) որոշման N 8 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «Թ.1» բաժնով՝

«

Թ.1 **16.1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության՝ պարեկապահակետային ծառայության ոստիկանության գնդի, «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայության վաշտի ծառայողներ, տարածք բաժնի գծային բաժանմունքի ծառայության ավագ տեսուչ**

16.2. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության ոստիկանության գնդի (բացառությամբ 4-րդ (հատուկ) գումարտակի) ծառայողներ

16.3. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության ոստիկանության գնդի 4-րդ (հատուկ) գումարտակի՝

1) Գնդի կազմում հատուկ գումարտակի հրամանատար
2) Գնդի կազմում հատուկ գումարտակի հրամանատարի տեղակալ
3) Վաշտի հրամանատար
4) Ավագ ինժեներ
5) Դասակի հրամանատար
6) Տեսուչ
7) Ավագ ոստիկան

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն որոշման 1-ին կետի 1-ին, 5-րդ և 7-րդ ենթակետերի գործողությունը տարածվում է 2021 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

« »_____ 2021թ.

ք. Երևան